Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 08

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<04>> հունիսի 2021թ. ք. Երևան

2021 թվականի հունիսի 4-ին տեղի ունեցավ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Ա. Կարապետյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
Ա. Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար,
Ա. Թումանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
Ա. Պապյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
Ա. Բաղալյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
Ն. Թևոսյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2.«Տրանս-Սիստեմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00003 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիր(ներ)ն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

«Հ. ԳՐՔԻԿՅԱՆ» ՍՊԸ-ի 31.05.2021թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05252 լիցենզիան և լիցենզիայի N 00001, N 00002, N 00003 և N 00004 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց «Հ. ԳՐՔԻԿՅԱՆ» ՍՊԸ-ի 31.05.2021թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05252 լիցենզիան և լիցենզիայի N 00001, N 00002, N 00003 և N 00004 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«Հ. ԳՐՔԻԿՅԱՆ» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. «ՏՐԱՆՍ-ՍԻՍՏԵՄ» ՍՊ ընկերությանը տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00003 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

«ՏՐԱՆՍ-ՍԻՍՏԵՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021թ. մայիսի 31-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00003 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց Կազմակերպության 2021թ. մայիսի 31-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00003 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ BPS-Kompakt-3.5 հոլովակային ստենդի փորձաքննության տվյալները պարունակող տեխանձնագիրը, «Շերպա» ընկերության պաշտոնական ներկայացուցիչ «Շերպա Վ.Գ.Վ» ընկերության եզրակացությունը ներկայացված ստենդի վերաբերյալ, տեխնիկական զննության իրականացման արտադրական տարածքի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման 2357703 վկայականը, Չափագրումների ազգային ինստիտուտի կողմից տրամադրված հոսքագծի ստուգաչափման վկայականը և շինության հատակագիծը:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՏՐԱՆՍ-ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
քարտուղար Ա. Ստեփանյան